



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՛

«Փրայմ Կապիտալ» ՍՊԸ-ի 2023թ-ի օգոստոսի
10-ի խորհրդի թիվ 03/23 որոշմամբ
խորհրդի նախագահ՝ Սերգեյ Շևչենկո

«ՓՐԱՅՄ ԿԱՊԻՏԱԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրությամբ)

ԵՐԵՎԱՆ 2023

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

- 1.1. «Շահերի բախման քաղաքականությունը» (այսուհետ՝ Քաղաքականություն) սահմանում է «Փրայմ Կապիտալ» ՍՊԸ-ում (այսուհետ՝ Ընկերություն) իրականացվող գործարքների, այդ թվում նաև Ֆինանսական շուկաներում իրականացվող գործարքների արդյունքում առաջացող հնարավոր շահերի բախման դեպքերը, վերջիններիս բացառմանն ուղղված միջոցառումները, հաճախորդների շահերի պաշտպանության, աշխատակիցների նկատմամբ կիրառվող պահանջների սահմանման գործընթացը և շահերի բախման հնարավոր դեպքերի բացահայտման դեպքում աշխատակիցների կողմից ձեռնարկվող գործողությունները:
- 1.2. Սույն քաղաքականությունն ընդունված է «Ներդրումային Ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջների (Կանոնակարգ 4/07)» ինչպես նաև Ընկերության Կանոնադրության և այլ ներքին իրավական ակտերի հիման վրա:
- 1.3. Սույն քաղաքականությունը պետք է ապահովի այնպիսի ընթակարգերի գործարկումը, որոնք ուղղված են բացահայտելու, ուսումնասիրելու և կարգավորելու բոլոր հնարավոր կամ իրական հակասությունները, որպեսզի դրանք չվնասեն հաճախորդին կամ առհասարակ շուկաներին:
- 1.4. Սույն քաղաքականության հիմնական նպատակը շահերի բախման վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը և առաջացող հակասությունների կառավարումն է բարեվարքության և կորպորատիվ կառավարման սկզբունքների, ինչպես նաև կարգավորողի կողմից սահմանված պահանջներին համապատասխան:

ԳԼՈՒԽ 2. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

- 2.1. Շահերի բախում կարող է առաջանալ տարբեր հարաբերություններում, որոնք հաճախ միմյանց հետ սերտ կապված են և կարող են համընկնել: Այն ներառում է շահերի բախում, որոնք առաջանում են՝
- ա) հաճախորդի և Ընկերության, Ընկերության աշխատակցի, կամ երրորդ անձ համարվող ներկայացուցչի միջև,
 - բ) երկու կամ ավելի հաճախորդների միջև՝ մատուցվող ներդրումային ծառայության շրջանակներում,
 - գ) Ընկերության և աշխատակցի, մատակարարի, երրորդ անձ ներկայացուցչի կամ նշանակալից բաժնետիրոջ միջև,
 - դ) երկու կամ ավելի աշխատակիցների միջև:
- 2.2. Շահերի բախումների նկատմամբ կիրառվող սկզբունքներն են՝
- ✓ Ընկերությունը պետք է բարեխղճորեն իրականացնի իր գործունեությունը,
 - ✓ Ընկերությունը պետք է բավարար ուշադրություն դարձնի իր հաճախորդների շահերին և արդարացի վերաբերվի դրանց,
 - ✓ Ընկերությունը պետք է կառավարի ինչպես իր և հաճախորդների, այնպես էլ մեկ հաճախորդի և մյուս հաճախորդների միջև առաջացող շահերի բախումները:
- 2.3. Ընկերությունից պահանջվում է ձեռնարկել բոլոր համապատասխան քայլերը Ընկերության՝ ներառյալ իր ղեկավարների, աշխատակիցների, լիազորված ներկայացուցիչների, այդ թվում՝ ուղղակի կամ անուղղակի նրանց վերահսկողության ներքո գտնվող ցանկացած այլ անձի և հաճախորդների, ինչպես նաև մեկ հաճախորդի և մյուս հաճախորդների միջև շահերի բախումները հայտնաբերելու, կառավարելու, արձանագրելու, կանխելու, իսկ անհրաժեշտության դեպքում նաև բացահայտելու համար, ինչպես նաև ունենալ շահերի բախման հետ կապված գրավոր քաղաքականություն:
- 2.4. Այն դեպքում, երբ Ընկերության կողմից շահերի բախումը կառավարելու համար նախատեսված կարգավորումները բավարար չեն ողջամիտ վստահություն ապահովելու համար, որպեսզի Հաճախորդի կամ Մասնակցի շահերին վնաս պատճառելու ռիսկը կանխվի, Ընկերությունը նախքան որևէ գործունեություն իրականացնելը, գործարք կնքելը հստակ բացահայտում է հետևյալը՝

- Շահերի բախման ընդհանուր բնույթը և/կամ աղբյուրները,
 - Այդ ռիսկերը մեղմելու ուղղությամբ ձեռնարկված քայլերը:
- 2.5. Այն դեպքում, երբ Ընկերությունը հնարավորություն չունի խուսափել կամ կառավարել շահերի բախումը, ապա պետք է հրաժարվել պահանջվող ծառայությունների մատուցումից:
- 2.6. Ընկերության գործունեության հետ կապված կարող են լինել այլ հավանական շահերի բախման դեպքեր, որոնք չեն առաջացնում Ընկերության հաճախորդների շահերին վնաս պատճառելու վտանգ, որոնք պատշաճ կերպով կառավարվում են համապատասխան գործընթացների և ընթացակարգերի միջոցով, և դրանք արտացոլված չեն սույն քաղաքականության մեջ:

ԳԼՈՒԽ 3. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- 3.1. Հաճախորդի շահերի պաշտպանության նպատակով արժեթղթերով գործառնություններ իրականացնող համապատասխան աշխատակիցները պարտավոր են.
- 3.1.1. պահպանել արժեթղթերի ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության և Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջները և չկնքել դրանց հակասող գործարքներ,
 - 3.1.2. հաճախորդի շահերը վեր դասել Ընկերության շահերից և խուսափել այնպիսի գործարքների կնքումից, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ հաճախորդի շահերի վրա,
 - 3.1.3. գործել անկողմնակալության, ճշտապահության և հաճախորդների արժեթղթերով և դրամական միջոցներով իրականացված բոլոր գործարքների վերաբերյալ վերջիններիս պարտադիր տեղեկացման սկզբունքներով,
 - 3.1.4. ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը բացահայտելու համար այն շահերի բախումները, որոնք առաջացել են կամ կարող են առաջանալ իրենց՝ որպես Ընկերության աշխատակցի գործունեության ընթացքում:
 - 3.1.5. չիրականացնել Հաճախորդի շահերին հակասող գործարքներ, որոնց վերջնական նպատակն է Ընկերության կողմից տվյալ Հաճախորդից գանձվող միջնորդավճարների և այլ վճարների ծավալների մեծացումը,

- 3.1.6. Հաճախորդի համար գործարքներ կնքելիս, շահերի բախման հնարավոր դեպքերի ի հայտ գալու ժամանակ Հաճախորդի շահերը համարել գերակա Ընկերության շահերի նկատմամբ,
- 3.1.7. Հաճախորդների համար իրականացվող գործարքներն իրականացնել մասնագիտական բարձր մակարդակով և հնարավոր լավագույն պայմաններով,
- 3.1.8. կնքել գործարքներ բացառապես Հաճախորդների հետ կնքված պայմանագրերով, Ֆոնդի կանոններով կամ ներքին իրավական ակտերով նախատեսված կարգով,
- 3.1.9. անվերապահորեն հետևել ծառայողական տեղեկատվության պահպանման և ստորաբաժանումների միջև տեղեկատվության փոխանակման ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված պահանջների պահպանմանը,
- 3.1.10. իրենց իրավասությունների շրջանակներում տեղեկացնել անմիջական ղեկավարին ՀՀ օրենսդրության և Ընկերության ներքին իրավական ակտերի հնարավոր խախտումների, ինչպես նաև այն գործառնությունների մասին, որոնց առնչությամբ Ընկերությունը ՀՀ օրենսդրության համաձայն կարող է դիտվել որպես շահագրգիռ անձ կամ դա կարող է հանգեցնել շահերի բախման,
- 3.1.11. չտրամադրել, չընդունել և չպահել երրորդ անձանցից ցանկացած վճար կամ այլ դրամական պարգևներ, որոնք նախատեսված չեն Ընկերության ներքին իրավական ակտերով կամ Ֆոնդի կանոններով, այդ թվում՝ չընդունել նվերներ:
- 3.1.12. առանց Ընկերության կառավարման համապատասխան մարմնի գրավոր թույլտվության՝ վճարովի ծառայություններ չմատուցել այլ անձանց՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրությունում առկա սահմանափակումները,
- 3.1.13. հանդես գալ որպես այլ առևտրային կազմակերպության տնօրենների խորհրդի, գործադիր մարմնի անդամ կամ այլ պաշտոնատար անձ միայն Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի գրավոր թույլտվությամբ,
- 3.1.14. տեղեկացնել Ընկերության գործադիր մարմնի ղեկավարին իրենց պարտականությունների կատարման ընթացքում իրենց վրա գործադրվող ճնշումների վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 4. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 4.1. Ընկերության աշխատակիցները հրահանգավորվում են սույն Քաղաքականությամբ, Ընկերության այլ ներքին իրավական ակտերով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ՝ Շահերի բախման կանխարգելման ուղղված միջոցառումների պահպանման հարցերով:
- 4.2. Ընկերության աշխատակիցները, անկախ զբաղեցրած պաշտոնից, պարտավոր են ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք հակասում են սույն Քաղաքականության սկզբունքներին և Ընկերության շահերին կամ կարող են դիտվել որպես դրանց հակասող կամ կարող են ազդել աշխատակցի՝ իր աշխատանքային պարտականությունների անաչառ ու ազնիվ կատարման վրա:
- 4.3. Ընկերության աշխատակիցների կողմից, իրենց իրավասությունների շրջանակներում Հաճախորդներին վնաս պատճառելու համար կատարվող գործարքների կնքմամբ, իրենց շահը Հաճախորդների շահից վեր դասելու, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ցանկացած տիպի գաղտնի տեղեկատվության բացահայտման և տարածման, այդ տեղեկատվությունը ի շահ իրենց օգտագործման և ՀՀ օրենսդրության և Ընկերության ներքին իրավական ակտերով նախատեսված իրենց պարտականությունները չկատարելու կամ անբարեխիղճ կատարելու դեպքում, Ընկերության աշխատակիցների գործողությունները համարվում են կարգապահական կոպիտ խախտում և նրանք ենթարկվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգապահական պատասխանատվության, ընդհուպ մինչև աշխատանքից ազատում:
- 4.4. Հաճախորդին պատճառված վնասը Ընկերության կողմից հատուցելու դեպքում, այն հետադարձ պահանջով ենթակա է գանձման Ընկերության համապատասխան աշխատակցից կամ աշխատակիցներից:
- 4.5. Ընկերության աշխատակիցներն իրենց պարտականությունների կատարման ընթացքում ի հայտ եկած կամ հնարավոր շահերի բախման մասին տեղեկատվության ստացման դեպքում, պարտավոր են տեղեկացնել գործադիր մարմնին:
- 4.6. Սույն Քաղականությունը ուժի մեջ է մտնում «Փրայմ Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Տնօրենների խորհրդի կողմից հաստատվելու պահից:

- 4.7. Սույն Քաղականությունը ուժը կորցրած է ճանաչվում «Փրայմ Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Տնօրենների խորհրդի կողմից այն ուժը կորցրած ճանաչելու պահից:
- 4.8. Սույն Քաղականությունը փոփոխություններն ու լրացումները ուժի մեջ են մտնում «Փրայմ Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Տնօրենների խորհրդի կողմից այն հաստատելու պահից: